

APAGA
Quarterly

آبَاگَا
فصلنامه

فصلنامه فرهنگی – اجتماعی مطالعات شرق شناسی ، ایرانشناسی و ارمنی شناسی
An International Journal of Oriental Studies



تجمل پرستی ایرانیان در طول تاریخ

ISSN 1682-5438

شماره ۷۴ تابستان (شهریور) ۱۳۹۷
No. 74, Մեպտեմբեր 2018

Հ Ա Յ . Յ
Հանդես

APAGA
Quarterly

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես
An International Journal of Oriental Studies



Ashkharatsuyts, (World map),
by Vardan Areveltsi (1200-1271), Paris 1960

ISSN 1682-5438

Համար 74 Մեպտեմբեր , 2018 թ.

No. 74, September 2018

ԱՊԱԳԱ No. Համար 74, 2018 APAGA

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես
An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր
License-holder, Publisher & Editor-in-Chief
Էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian,

Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-Իրան
POBOX No. 15875-9488 Tehran – Iran

WEB: www.ApagaOnline.com and www.apagamonthly.4t.com
E-mail: apaga98@hotmail.com ISSN 1682-5438

Բովանդակություն

Հայերեն Հարցազրույց Պրոֆեսոր Վ. Պետրոսյանի հետ

Անգլերեն Ակնարկ Հայաստանի պատմական աշխարհագրության

Պարսկերեն Ակնարկ իրանական փառասիրության պատմության

CONTENTS

Armenian Interview with Professor V. Petrosyan

English Historical overview of the Armenian geography.

Persian Iranian Luxuriance during history

- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
- Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
- Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Subscriptions: \$ 20 per year

Գինը 5000 ռիալ

آپاگا فصلنامه بین المللی ایرانشناسی و ارمنی شناسی

شماره ۷۴ تابستان ۱۳۹۷

صاحب امتیاز و مدیر مسئول

ادیک باغداساریان

صندوق پستی شماره ۹۴۸۸-۱۵۸۷۵

تهران - ایران

نشانی اینترنت www.ApagaOnline.com و www.apagamonthly.4t.com

apaga98@hotmail.com

پست الکترونیکی

ISSN 1682-5438

فهرست

فارسی تجمل پرستی در تاریخ ایران

ارمنی کفتگو با پروفسور و. پتروسیان

انگلیسی نگاهی بر تاریخ جغرافیاشناسی ارمنی

مقالات و دیدگاه های مندرج در نشریه لزوماً "بیانگر موضع "آپاگا" نیست.

نشریه در حک و اصلاح مقاله ها مجاز است.

مقالات و مطالب رسیده باز گردانده نمی شود.

استفاده از مطالب "آپاگا" با ذکر ماخذ آزاد است.

شمارگان ۱۰۰ بها ۱۰۰۰۰ تومان

چاپ احسان-تهران چهارراه ولیعصر پلاک ۱۱۴۸

Հասարակական գործիչ, լրագրող Գեղամ Գալստյանի հարցազրույցը պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Պետրոսյանի հետ

Գեղամ Գալստյան-Լրանում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 100-ամյակը: Այդ հեղափոխության տարեդարձը շարունակում է առաջ բերել լուրջ և ինտելեկտուալ հազեցված բանավեճ: 100 տարի է անցել, բայց շատ հարցերի վերաբերյալ պատասխանները դեռևս չեն ընդունվել հանրության կողմից:

Ուստի տարբեր տեսակետները հնչում են մինևույն համոզմունքով: Ինչու և սովետական ժամանակաշրջանի վերաբերյալ վեճերը նորից մարդկանց բաժանում են, ինչպես ցավորաբար ընդունված է ասել, սպիտակների ու կարմիրների: Ինչ գրավչություն ունեն ձախ գաղափարները: Հոկտեմբերի ո՞ր դասերը մենք այդպես էլ չսովորեցինք:

Ահա, այս հարցերի շուրջ ուզում եմ ձեզ հետ մտքեր փոխանակել:

Ասացեք, խնդրեմ, ինչպե՞ս եք դուք գնահատում Հոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը:

Վ. Պետրոսյան.- ձեր հարցին պատասխանելուց առաջ, ուզում եմ հիշել Չինաստանի խոշորագույն վերափոխիչ Դին Սյաո Պինի խոսքերը: Երբ նրան հարցրել է 18-րդ դարի ֆրանսիական հեղափոխության նշանակության մասին, նա պատասխանել է. «<Այդ հեղափոխությունը կատարվել է 200 տարի առաջ: այնքան էլ շատ ժամանակ չի անցել, որ հնարավոր լինի գնահատել այդ հեղափոխությունը>>:

Բայց, այնուամենայնիվ, պետք է ասել, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը 20-րդ դարի խոշորագույն իրադարձությունն է: Դրա սկիզբը կարելի է տեսնել Անգլիայի հեղափոխության, հետո ֆրանսիական հեղափոխության մեջ:

Հոկտեմբերյան հեղափոխությունն ամենից առաջ փոխել է մարդկանց միջև եղած հարաբերությունները, ճանապարհ է հարթել արտադրողական դասակարգերի համար, որոնք իրենց ձեռքն են վերցրել հասարակության կյանքի կազմակերպումը:

Այնուհետև, Հոկտեմբերյան հեղափոխությունը ստեղծել է նոր քաղաքակրթական կացությամբ, որի կենտրոնում կանգնել է աշխատանքի մարդը:

Պետք է նկատի ունենալ, որ Արևելյան Հայաստանը 19-րդ դարի սկզբից գտնվել է Ռուսաստանի կազմում և այդ պատճառով էլ, Ռուսաստանում տեղի ունեցած հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի մեջ տեղի ունեցած բոլոր շրջադարձային փոփոխություններն ուղղակիորեն անդրադարձել են նաև մեր իրականության մեջ: Եվ այդ պատճառով էլ, իմ կարծիքով, չպետք է հայկական իրականությունն անջատել ռուսականից:

Միայն այսպիսի մոտեցմամբ, համոզված եմ, որ հնարավոր կլինի նաև իմաստավորել Հոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը մեզ համար:

Բայց, անցնենք առաջ: Նախկինում, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, Ռուսաստանը խոշոր և ազդեցիկ պետություն էր, բայց տեխնիկապես հետամնացած էր մյուս խոշոր պետությունների համեմատությամբ:

Իսկ ի՞նչ արեցին բոլշևիկները: Պատմականորեն կարճ ժամանակի

ընթացքում Ռուսաստանը մոդեռնիզացրին: Ընդգծեմ, որ դա նրանք արել են չոչնչացնելով երկրի հիմքը կազմող հիմնարար արժեքները: Ռուսաստանը դարձել է համաշխարհային առաջընթացի լիդերը:

Հիշենք մեր ժողովրդի պատմությունից: 1920թ. Հայաստանը համատարած անգրագիտության երկիր էր: Հայաստանում, բառիս լայն իմաստով, չկար մշակույթ, արվեստ, գրականություն, ճարտարապետություն, գիտություն, արդյունաբերություն, կրթություն, առողջապահություն և այլն և այլն:

Իհարկե, դրանք կային, բայց ոչ Հայաստանում: Բոլշևիկներն այդ ամենը ստեղծեցին իրենց իշխանության առաջին ամիսներից: Ստեղծեցին ու զարգացրին: Հայաստանը մտավ աշխարհի առաջավոր երկրների շարքը:

Հարց. Բայց, միթե ճիշտ չեն նրանք, ովքեր այն տեսակետն են հայտնում, թե էթե Հայաստանի առաջին հանրապետությունը շարունակել էր գոյությունը, ապա երկիրն ավելի կզարգանար, քան բոլշևիկների իշխանության օրոք:

Պ. Դա հեքիաթ է երեխաների ու միամիտ, պատմությունից անտեղյակ մարդկանց համար: Քեմալական Թուրքիայի հետ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրած Հայաստանի հանարապետությունը հայտնվել էր Թուրքիայի լիակատար հսկողության տակ: Արևմտյան տերություններն այլևս Հայկական հարցի մասին չէին խոսում և յուրաքանչյուրն առանձին-առանձին թուրքերի առաջնորդ Մուստաֆա Քեմալի հետ առուծախի մեջ էին մտել իրենց շահերն առաջ տանելով:

Որբերով ու գաղթականներով լցված, սովի ճիրաններում հայտնված Հայաստանը մնացել էր մեն-մենակ Թուրքիայի դեմ, լքված իր եվրոպական <<հովանավորներից>>:

Կարո՞ղ էր այսպիսի պայմաններում հայտնված Հայաստանն ապահովել իր զարգացումն ու առջընթացը:

Հ. Ասացեք ինդրեմ, իսկ կրոնը, որ ժողովրդական գիտակցությունից դուրս մղվեց, արդյոք, հիմնարար արժեք չէր:

Պ. Իհարկե, ոչ: Վերցրեք մեր ժողովրդական բանահյույսությունը, երգերը, առակները, ասացվածքները, հեքիաթները և այլն: Մի թե դրանք արդարության, ազատության, կոլեկտիվ կյանքի, հոգևորի ու նյութականի ճիշտ հարաբերության մասին չեն:

Շենց բոլշևիկներն էին, որ իրականացրին այն ամենը, ինչին գյուղացիությունը ձգտել է դարեր շարունակ: Եվ դրա համար էլ Լենինը բոլշևիկներին համարել է Ստեպան Ռազինի ու Եմելյան Պուգաչովի հաջորդներ:

Այստեղ պետք է հաշվի առնել մի հանգամանք: Վերոհիշյալ մեծագույն վերափոխումների, նորի ստեղծման պայմաններում եկեղեցին այլևս չէր համարվում հանրության բազիսային հիմքը:

Հայ եկեղեցու պատմությունը լեցուն է բազմաթիվ ու բազմապիսի օրինակներով, երբ եկեղեցին, հոգևորականության մեծամասնությունն իրենց դրսևորել են բացասական կողմերով, բայց, չգիտես ինչու, իրենց անվանել են <<սուրբ հայր>>, <<սրբազան>>, <<վեհափառ>> և այլն: Ու երբ նայում ես այդ անվանումների կրողների գործերին, վարքագծին, բնականաբար, հարց է առաջանում, ինչու է, օրհնակ, մեր ժողովուրդն ասում <<սար ու ձոր տերտերի փոր>> կամ <<տերտերն օրհնեց անվարձ մնաց>> և այլն, և այլն:

Հ. Բայց դա նշանակում էր, որ իշխանությունը պետք է հալածեր եկեղեցուն, հոգևորականությանը:

Պ. Ցանկացած իշխանություն, սովետական կամ թե այլ բնույթի,

եկեղեցու նկատմամբ իր քաղաքականությունը տանում է, ելնելով այն բանից, թե եկեղեցին ինչքանով է լոյսալ կամ չեզոք պետության գործերի նկատմամբ

Պատմության մեջ ինչքան ուզեք փաստեր կան այն մասին, որ երբ խախտվել է այդ հարաբերակցությունը, սկսվել է հակամարտությունը: Միայն հիշեմ մեր պատմությունից հետևյալ օրինակը: Քրիստոնեական եկեղեցիների մեջ միայն հայ եկեղեցին էր հաստատել կաթողիկոսի, տվյալ դեպքում Գրիգոր Լուսավորիչի ժառանգական իրավունքը:

Դրանով փաստորեն Հայոց աշխարհում թագավորական, այսինքն՝ պետական իշխանության և կաթողիկոսի իշխանության միջև ստեղծվել է խոր հակասություն, որը, ի վերջո, պակաս դեր չի խաղացել հայկական պետականության կործանման գործում:

Կամ էլ երիտասարդ Պապ թագավորի և եղեկեցու հարաբերությունները: Ինչ էր ուզում Պապ թագավորը: Նա փակել է անկեղանցները, որտեղ հավաքվել էին աշխատանքից խուսափող ձրիակերները: Երկրին զինվոր էր պետք, հողը մշակող քեր պետք և ոչ թե անկեղանոցի բնակիչ:

Պապը փակել է կուսանոցները: Երիտասարդ թագավորը հասկացել էր՝ կնոջ ճակատագիրն է մայր դառնալ, ապրել մայրության սրբազան զգացումը, երկրին զինվոր ու աշխատող պարզևել:

Հիշենք նաև Պյոտր Առաջին ցարին: Նա Ռուսաստանում վերացրել է պատրիարքությունը, հենց որ պատրիարքը փորձել է միջամտել նրա իշխանությանը:

2.- Լավ, ենթադրենք, որ այդպես է եղել, այդ դեպքում, ինչո՞վ կբացատրեք Խորեն Մուրադբեկյանի սպանությունը:

Պ.- Մեր զրույցը մի տեսակ վերածվում է եկեղեցական թեմային: Բայց որ հարցրել եք, պատասխանեմ:

Եթե ուզում եք Խորեն Մուրադբեկյանի մասին իմանալ, ապա ծանոթացեք Արշակ Չոպանյանին Մեծն Կոմիտասի գրած նամակներին:

Այդ Մուրադբեկյանի հալածանքով էր, որ Կոմիտասը հեռացել էր Էջմիածնի վանքից ու տեղափոխվել Սևան: Նրա հալածանքի արդյունքով էր, որ Կոմիտասը, ընդհանրապես, հարկադրված է եղել հեռանալ Կ. Պոլիս...

Կոմիտասը վայելում էր Էջմիածնի հոգևորականների մեծամասնության համակրանքն ու հարգանքը և նրանք չէին կարող ներել Մուրադբեկյանին Կոմիտասի ողբերգական ճակատագրի համար, հատկապես, 1935թ. Կոմիտասի աճյունը Հայաստան տեղափոխվելուց հետո:

1920-30-ական թվականներին Սովետական Միությունում, այդ թվում նաև Հայաստանում ծավալվել էր հսկայական շինարարություն: Կառուցվող գործարանների համար արևմտյան զարգացած երկրներից հարկավոր էր ձեռք բերել դրանց համար նորագույն սարքավորումներ, որոնք սովետական երկրին վաճառվում էր տարադրամով, հատկապես դոլարով կամ ոսկով:

Հայաստանում կառուցվող արդյունաբերական ձեռնարկությունների համար սարքավորումներ գնելու համար հարկավոր էր վճարել ոսկով: Պետական քաղվարչությանը հայտնի էր դարձել, որ Էջմիածնի կաթողիկոսությունն ունի մեծ քանակությամբ արծաթե և ոսկե զարդեր: Մուրադբեկյանը թաքցրել է և ժխտել է դրանց գոյությունը:

Չոգևորականներից ոմանք գիտեին, թե ոսկեղենը որտեղ է պահվում: Եվ Կոմիտասի վրեժը լուծելու համար նրանք պետքաղվարչությանը ցույց են տվել թաքստոցի տեղը: Ոսկեղենը հայտնաբերվել է: Երբ Մուրադբեկյանին հայտնել են, որ չեկիստները գտել են իր թաքցրած

նսկեղենը, սրտի ուժգին նույն է ունեցել և դրանից այլևս դուրս չի եկել: Սա է ճշմարտությունը: Իսկ, նրանք, ովքեր ուզում են վարքաբեկել սովետական իշխանությանը, ստեղծել են միֆ Մուրադբեկյանին սպանելու մասին: Մարդու սիրտն ուղղակի չի դիմացել ուժգին հոգեկան ապրումների հարվածին: Մուրադբեկյանը կարող էր ապրել, չմեռնել, եթե հանգիստ հանձներ պահանջված ոսկեղենը և դրանով մասնակցեր Հայաստանի վերաշինությանը:

Պետության նկատմամբ բոլորովին այլ վերաբերմունք են ունեցել Գևորգ Չորեքյանն ու Վազգեն Առաջինը: Հիշենք, թե Հայրենական պատերազմի ամենաձանր պահին, երբ գերմանական զորքերը մտել էին Հյուսիսային Կովկաս, Չորեքյանն ինչպիսի դրամական օգնություն է ցույց տվել Կարմիր բանակին, ինչպիսի եռանդով է մասնակցել <<Մասունսի Դավիթ>> տանկային շարայան կառուցման համար հանգանակության կազմակերպմանը:

Հիշենք նաև Վազգեն Առաջինի շրջահայած ու կշռադատված քաղաքականությունը պետության հանդեպ արժանանալով մեծագույն հարգանքի, ձեռք բերելով մեծ հեղինակություն:

Հ.-Ռուսաստանը մտել էր Առաջին համաշխարհային պատերազմի մեջ, որի վերջում կրակը դարձել էր սպառնալի: Այդ կրակի պայմաններում ինչպե՞ս պահպանվեց Ռուսաստանը:

Պ.- 1917թ. սկզբին Ռուսաստանի բանակը հայտնվել էր քայքայման մեջ: Կար մեկ ու կես միլիոն դասալիք: Այդ դասալիքների մեծ մասը գեներլ չէր հանձնել: Վիճակն այնքան էր բարդացել, որ նույնիսկ սպաները չէին համարձակվում առաջին գծում գտնվող խրամատներ գնալ, որովհետև քիչ չէին դեպքերը, երբ զինվորներն ուղղակի, առանց դատի ու դատաստանի, գնդակահարում էին իրենց մոտ եկած սպաներին: Ռուսաստանի պարտությունն արդեն կանխորոշվել էր:

Սակայն, ինչպես ցույց են տալիս նաև նորահայտ փաստաթղթերը, Հոկտեմբերյան հեղափոխության և կատարված իշխանափոխության շնորհիվ Ռուսաստանը, Առաջին համաշխարհային պատերազմից հետո, ԱՄՆ-ի հետ միասին դարձել է հիմնական քաղաքական ուժերից մեկը:

Տեսեք, ովքե՞ր էին պատերազմում Ռուսաստանի դեմ: Երեք կայսրություն Գերմանական, Ավստրո-հունգարական և օսմանյան, որոնք պատերազմի հետևանքով դադարեցրել են իրենց գոյությունը:

Իսկ Ռուսաստանը: Այստեղ փոխվեց կառավարման ձևը, բովանդակությունը, նա կարողացավ նորից պաշտպանել իր պետականությունը և վերականգնել համաբոյա կորցրած բոլոր տարածքները:

Նոր Ռուսաստանը կարողացել է դիմանալ նախկին դաշնակիցների կողմից իրեն պարտադրված քաղաքացիական պատերազմին ու օտարերկրյա ռազմական ինտերվենցիային:

Այդ ագրեսիան կազմակերպած դաշնակիցները, նույնիսկ մինչև Բրեստի հաշտության կնքումը, չէին թաքցնում իրար մեջ Ռուսաստանը բաժանելու իրենց մտադրությունը:

Իսկ ինչպե՞ս է բուշնիկյան կառավարությունը կարողացել դիմադրել այդ ագրեսիային և հաղթանակ տանել: Կա միայն մեկ պատասխան Ռուսաստանի բնակչության մեծամասնության աջակցության շնորհիվ:

Հ.- Դուք հիշեցիք Բրեստի հաշտության մասին: Բայց, չէ՞ որ սովորաբար ասվում է, որ Ռուսաստանը Բրեստում ստորագրել է խայտառակ հաշտություն:

Պ.- Ճիշտ է: Առաջինը Լենինն է Բրեստի պայմանագիրն անվանել <<խայտառակ հաշտություն>>: Բայց վեց ամիս անց Լենինի կառավարությունը չեղյալ է համարել Բրեստի հաշտության

պայմանագիրը:

Զ.- Բրեստի հաշտության պայմանագրով Կարսն ու Արդահանն ամբողջությամբ զիջվել է Թուրքիային: Այդ ժամանակ Ռուսաստանն իրավունք ունի ր Կարսն ու Արդահանը զիջել թուրքերին:

Պ.- Բրեստի հաշտության կապակցությամբ հայ իրականության մեջ ստեղծվել է այն տեսակետը, որ Ռուսաստանն իրավունք չունի Կարսն ու Արդահանը տալ թուրքերին: Ռուսաստանին ներկայացված այդ մեղադրանքը ճիշտ է առաջին հայացքից:

Նախ, հիշեցնեմ հետևյալը: Ռուսաստանը Կարսն ու Արդահանը Թուրքիայից ստացել է 1877-1878թթ. պատերազմից հետո Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով: Թուրքիան պետք է վճարեր հսկայական գումարով ռազմատուգանք, որը չունի տույժանք: Ուստի Թուրքիան Կարսն ու Արդահանը զիջել է այդ ռազմատուգանքի դիմաց: Այդպիսով, Կարսն ու Արդահանը Ռուսաստանի կազմում են մնացել ընդամենը 40 տարի:

Բրեստի պայմանագրում նշվել է, որ Ռուսաստանն իր գորքերը հանում է Կարսից ու Արդահանից, որտեղ պետք է անցկացվի բնակչության հանրաքվե թե որ պետության կազմում են ուզում մնալ:

Երբ սկսվել են Անդրկովկասյան դեմոկրատական հանրապետության և Թուրքիայի միջև բանակցությունները, ինչպես Տրապիզոնում, այնպես էլ Բաթում քաղաքում, Մովետական Ռուսաստանը պահանջել է, որպեսզի այդ բանակցություններին մասնակցի իր ներկայացուցիչը, որը լինելու էր Գովկասի գործերով ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանի:

Թուրքիան մերժել է այդ պահանջը: նրա թելադրանքով Հայոց ազգային խորհրդի կազմած պատվիրակությունը, որն արդեն հանդես էր գալիս հռչակված Հայաստանի հանրապետության անունից, նույնպես մերժել է Մովետական Ռուսաստանի ներկացուցչի մասնակցությունը:

Բաթումի բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունը հայտարարել է, որ Բրեստի պայմանագիրն իրենց համար սրբություն է և պետք է անհապաղ կատարվի Կարսն ու Արդահանը պետք է հանձնվի Թուրքիային:

Դժբախտաբար, հայկական պատվիրակության անդամներն այնքան են ոգևորվել թուրք պատվիրակների շողոմ խոսքերից, որ նույնիսկ, հարկ չեն համարել թուրքական կողմից պահանջել ցույց տալ Բրեստի հաշտության պայմանագրի տեքստը:

Ավելորդ է ասել, որ եթե Ստեփան Շահումյանը Ռուսաստանի կողմից մասնակցեր Բաթումի բանակցություններին, ապա թուրքերին չէր հաջողվի հայոց պատվիրակներին Բրեստի պայմանագրի բովանդակությունը ներկայացնել իրենց քմահաճությամբ...

Զ. – Ես այս բոլոր հարցերն ուղղեցի ձեզ, որովհետև մեր հասարակության մեջ դրանց մասին կան զանազան տեսակետներ, որոնց մեջ է նաև Մովետական Ռուսաստանի հասցեին հնչած մեղադրանքները: Այդ հարցերից մեկն էլ վերաբերում է <<Թուրքահայաստանի մասին>> Մովետական Ռուսաստանի ժողովուրդի դեկրետին, որի ընդունման 100-ամյակը լրանում է 2017թ. դեկտեմբերին:

Ինչ էք կարծում այդ դեկրետը ժամանակավրեպ չէր կամ կայի՞ն դրա իրագործման երաշխիքներ:

Պ.- Ոչ: Այդպես չեմ կարծում: <<Թուրքահայաստանի մասին>> դեկրետի վերաբերյալ այդպիսի տեսակետ արտահայտել են նրանք, որոնք ուղղակի պատասխանատու են այդ դեկրետը չիրագործելու համար:

Շ.-Սեր այսօրվա գրույցը նվիրված է Հոկտեմբերյան հեղափոխության 100-ամյակին, բայց, կներեք, իմ հարցերն ավելի շատ վերաբերեցին մեզ հայերիս: Միայն խնդրում եմ, էթե հնարավոր կհամարեք, գոնե համառոտ հայտնեք ձեր տեսակետը <<Թուրքահայաստանի մասին>> դեկրետի վերաբերյալ:

Պ.- Ճիշտ է, մենք պայմանավորվել էինք գրուցել Հոկտեմբերյան հեղափոխության 100-ամյակի մասին, բայց ձեր տված հարցերն էլ են առնչվում հենց այդ հեղափոխությանը: Այդպիսին է նաև ձեր նշած դեկրետը:

Կպատասխանեմ շատ համառոտ:

Առաջին. Ովքե՞ր էին դեկրետի հեղինակները: Կոմունիստներ Վառլամ Ավանեսովը, Վահան Տեղյանը, ձախ էսեռ Պոռոշ Պոռոշյանը անվանի վիպասան Պերճ Պոռոշյանի որդին, դաշնակցության կուսակցության հիմնադիրներից, նշանավոր Ռոստոմ Զորյանը:

Տարբեր, հաճախ նաև իրարամերժ կուսակցությունների ներկայացուցիչներ: Բայց նրանք ունեին այն գիտակցությունը, որ համարվում են իրենց մայր հայ ժողովրդի զավակներ և պատասխանատու են նրա ճակատագրի համար: Հենց այս պատասխանատվությունն է նրանց միավորել: Հիանալի օրինակ բոլոր նրանց համար, ովքեր դեռ կարծում են, թե իրենց կուսակցությունը ստեղծվել է ոչ թե ժողովրդին ծառայելու, այլ ժողովրդին ղեկավարելու համար:

Երկրորդ. Դեկրետը հռչակում էր Արևմտյան Հայաստանի անկախությունը, որի իրականացման համար անհրաժեշտ էր համարվում Արևմտյան Հայաստանի տարածքում պահել ռուսական զորքը:

Ի միջի այլոց, այդպիսի պահանջը մեր ժողովրդի պատմության մեջ նորություն չէ: Դեռևս 1780-90-ական թվականներին, երբ կայսրուհի Եկատերինա Երկրորդի օրոք Ռուսաստանը հաջող պատերազմներ էր մղում օսմանյան Թուրքիայի դեմ, հայ ազատագրական շարժման երկու կենտրոններում գործող առաջադեմ գործիչները Հովհաննես Լազարյանն ու Հովսեփ Արղոթյանը Պետերբուրգում, Շահամիր Շահամիրյանն ու Մովսես Բաղրամյանը Հնդկաստանում, կազմել էին Ռուսաստանի հովանավորությամբ անկախ Հայաստան ստեղծելու հայ-ռուսական դաշնագրի նախագծեր, որոնցով ընդգծվել էր մահմեդական շրջապատի հարձակումներից պաշտպանվելու նպատակով Հայաստանում ռուսական զորքի ներկայության անհրաժեշտությունը:

Երրորդ. <<Թուրքահայաստանի մասին>> դեկրետի ընդունման ժամանակ Կովկասյան ռազմաճակատում գտնվում էր 500 հազարանոց ռուսական բանակը:

Սովետական կառավարության <<Հաշտության մասին>> առաջին դեկրետը հռչակել էր առանց անեքսիաների հաշտություն կնքելու և զորքերը գրաված տարածքներից հանելու մասին:

Մակայն, այդ դեկրետի հեղինակ Լենինը, որը հետևողականորեն հանդես էր գալիս դեկրետի իրականացման պահանջով, համաձայնվել էր Արևմտյան Հայաստանում ռուսական զորքերի մնալուն:

Դեկրետով Շահումյանի վրա էր դրվել ռազմաճակատից ռուսական զորքերի հանելու հարցի լուծումը:

Հիշենք, որ ռուսական զորքերը գտնվում էին Արևմտյան Հայաստանի տարածքում, որի ղեկավարման համար ինչպես ցարական Ռուսաստանի կառավարությունը, այնպես էլ Ժամանակավոր կառավարությունը ստեղծել էին կառավարման մարմիններ, ճիշտ է, թերի, բայց, այնուամենայնիվ, այդ երկու կառավարությունների

նպատակի մեջ չէր մտել Արևմտյան Հայաստանի անկախության հարցը:

Արևմտյան տերությունների ղեկավարներն էլ, որ միշտ նպատավոր հայտարարություններ էին անում Հայկական հարցի արդար լուծման մասին, բայց այդպես էլ խոսքից գործի չանցան: Նրանք, ի վերջո, մոռացան ամեն ինչ և դաշնակցեցին Քեմալական Թուրքիայի հետ Լոզանի կոնֆերանսում թաղելով Հայկական հարցը:

Բայց խոշոր տերություններից միակը Սովետական Ռուսաստանը ոչ միայն հատուկ ղեկրետով հռչակել է Արևմտյան Հայաստանի անկախության մասին ղեկրետը, այլև այդ ղեկրետի իրագործումը դրել է հայ ժողովրդի լավագույն զավակ Ստեփան Շահումյանի վրա:

Ավելին <<Թուրքահայաստանի մասին>> ղեկրետը 1918թ. մտցվել է Սովետական Ռուսաստանի առաջին Սահմանադրության մեջ և այդ անկախությունը ճանաչվել է սահմանադրորեն:

Նշեցի, որ ռուսական զորքը գտնվում էր Արևմտյան Հայաստանի տարածքում և այդ զորքի ներկայությունը միակ երաշխիքն էր ղեկրետի իրականացման համար: Դա գիտակցում էր Շահումյանը և ամեն ինչ անում էր ռուսական զորքերը պահելու համար, լավ իմանալով, որ հեռացող ռուսական զորքերի փոխարեն Արևմտյան Հայաստան կմտնեն թուրքական զորքերը, որոնց առկայության պայմաններում ավելորդ էր մտածել Արևմտյան Հայաստանի անկախության մասին:

Անդրկովկասյան կառավարության մեջ գտնվող վրացի մենշևիկները թուրքերի հետ բանակցում էին Արևմտյան Հայաստանի տարածքների հաշվին իրենց հարցերը լուծելու համար: Ադրբեջանցի մուսավաթականները հանդես էին գալիս որպես Թուրքիայի դաշնակիցներ: Մնում էին կառավարության մեջ գտնվող դաշնակցականները:

Դաշնակցականների անունից հանդես եկող Վրացյանը <<Թուրքահայաստանի մասին>> ղեկրետն անվանել է անհեթեթություն և Շահումյանի հետ համագործակցելու փոխարեն միացել են մենշևիկներին ու մուսավաթականներին ամեն ինչ անելով ռազմաճակատից ռուսական զորքերը հեռացնելու համար:

Ես հիմա ուզում եմ այսօրվա դաշնակցականներին, որոնք խնկարկում են Վրացյանին, հարցնել. Մի թե Թիֆլիսում նստած Հայոց ազգային խորհրդի դաշնակցական ղեկավարները, որոնք մասնակցեցին ղեկրետի ձևադրմանը, ավելի հայրենասեր էին, քան թե ազնիվ ու շրջահայաց Ռոստոմ Զորյանը, որը եռանդով մասնակցել էր ղեկրետի ստեղծմանը:

Հ.-Քանի որ մեր գրույցում շոշափվեց նաև Թուրքիայի մասին, ուզում եմ այդ կապակցությամբ ասել հետևյալը: Մեր իրականության մեջ վիճահարույց է նաև 1921թ. մարտին Սովետական Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև կնքված Մոսկվայի պայմանագիրը և դրա շարունակությունը համարվող Կարսի պայմանագիրը:

Չրապարակից չի իջնում այն տեսակետը, թե այդ պայմանագրերով Սովետական Ռուսաստանը Թուրքիային է տվել հայկական հողերը, մեղադրում են Լենինին ու Ստալինին, որ հայերին պաշտպանելու փոխարեն աջակցել են Քեմալին:

Հետաքրքիր է այս ամենի մասին իմանալ ձեր տեսակետը:

Պ.- Այդ հարցերի մասին ես հանգամանորեն անդրադարձել եմ <<Հայաստան. 1919-1922 թվականներ>> աշխատության երկրորդ հատորում, ուստի ձեր հարցին կպատասխանեմ շատ համառոտ:

Սուսնց գնահատելու 1920թ. ղեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքված պայմանագիրը, հնարավոր չէ գնահատել 1921թ. Մոսկվայի պայմանագիրը:

Ալեքսանդրապոլի պայմանագրով, որը պատմաբան Լեոն անվանել էր <<Դաշնակցության հավերժական ամոթն ու խայտառակությունը>>, Հայաստանի տարածքը դարձել է այնքան, որքան Թուրքիան <<նվիրել էր>> 1918թ. հունիսի 4-ին Բաթում քաղաքում կնքված պայմանագրով:

Թուրքիային հաջողվել էր Հայաստանի դեմ ագրեսիայի միջոցով զավթել նրա տարածքների զգալի մասը: Թուրքական զորքերը գտնվում էին Ուլուխանլու (այժմ Մասիս քաղաք) կայարանում, որտեղից թուրքական հրանոթներն ուղղված էին Երևանի վրա:

Եթե ընթերցողը ծանոթանա Ալեքսանդրապոլի պայմանագրին, ապա նա կհամոզվի, որ քիչ է դա անվանել միայն ստրկական ու անարդարացի: Դրա ստորագրումն աղերսվում է ազգային դավաճանության հետ: Ժամանակին Լեոն ծանոթացել է այդ պայմանագրի թուրքական տեքստին, որի մի քանի հոդվածներում նշված դրույթները չեն մտցվել հայերեն տեքստի մեջ:

Ինչպես 1918թ. Բաթումի բանակցությունների ժամանակ, այնպես էլ 1920թ. դեկտեմբերին Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ թուրքական և հայկական կառավարությունները մերժել են դրանց Սովետական Ռուսաստանի պահանջն իր ներկայացուցչի մասնակցության մասին:

Այժմ 1921թ. մարտի 16-ին ստորագրված պայմանագրի մասին:

Այս կապակցությամբ մեր հանրությունը պետք է իմանա, որ սովետա-թուրքական բանակցությունների նախօրյակին Թուրքիան դեմ էր այդ բանակցություններին Սովետական Հայաստանի մասնակցությանը, վկայակոչելով, որ արդեն 1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի ու Թուրքիայի միջև կնքված պայմանագրով հաստատվել է Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը:

Սակայն, Սովետական Ռուսաստանի վճռական պնդմամբ Թուրքիան հարկադրված համաձայնվել է, որպեսզի Սովետական Հայաստանի ներկայացուցիչը մասնակցի սովետա-թուրքական բանակցություններին:

Ես ժամանակին ուսումնասիրել եմ այդ բանակցությունների նիստերի արձանագրությունները; Հենց սկզբից Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը և Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ Ալեքսանդր Բեկբաղյանը դրել են 1914թ. սահմանը վերականգնելու պահանջը, որը նաև բխում էր 1978թ. Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերից:

Թուրքական կողմը զանազան պատճառաբանություններով ձգձգում էր բանակցությունները, յուրաքանչյուր հարցի քննարկման ժամանակ ընդմիջում խնդրելով, այդ մասին իր կառավարությանը տեղյակ պահելու և նրա համաձայնությունը ստանալու համար:

Այդ ընդհատումներն այնքան երկար էին տևում, որ Չիչերինը ստիպված է եղել թուրքական պատվիրակությանը տրամադրել արտաքին գործերի ժողկոմատի ռադիո կապը:

Թուրքական պատվիրակության այս քայլն առաջին հայացքից թվում էր որպես դիվանագիտական խաղ: Բայց շուտով ամեն ինչ պարզ է դարձել:

1921թ. փետրվարին Վրացյանի գլխավորած, իսկապես, ավանտյուրան Երևանում տապալել է սովետական իշխանությունը: Մոսկվա ու Լոնդոն ուղարկված հեռագրերով Վրացյանը հայտնել է այդ մասին, նշելով, որ վերականգնվել է նախկին իշխանությունը, որը հավատարիմ է մնում դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում ստորագրված պայմանագրին և պահանջել է, որ տապալված սովետական իշխանության ներկայացուցիչն իրավունք չունի

Հայաստանի անունից բանակցություններին:

Վրացյանի հեռագիրը Մոսկվա է հասել այն պահին, երբ արդեն համարյա թե լուծվում էր 1914թ. սահմանի հարցը: Օգտվելով Վրացյանի հաղորդած տեղեկությունից, թուրքական պատվիրակությունը պահանջել է բանակցություններից հեռացնել արդեն գոյություն չունեցող սովետական կառավարության ներկայացուցիչ Ա. Բեկզադյանին, միաժամանակ պահանջելով, որ բանակցություններին չպետք է մասնակցի նաև Չիչերինի տեղակալ Լևոն Կարախանը:

Թուրքական պատվիրակությունը նաև հայտարարել է, քանի որ Հայաստանում վերականգնվել է այն իշխանությունը, որը ստորագրել էր ու այժմ էլ պաշտպանում է Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ուստի վերանում է այդ պայմանագրով հաստատված սահմանը փոփոխելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, Վրացյանի ղեկավարած ավանտյուրան, որը չգիտես ինչու դաշնակցականամետ հեղինակները շարունակում են պնդել ու մատուցել որպես Հայաստանի ազատագրության համար մղված ապստամբություն, մեղմ ասած, ամենավատ դերն է ունեցել:

Հ.-Բայց շրջանառության մեջ է այն տեսակետը, որ Մովետական Ռուսաստանն ու Թուրքիան իրավունք չունեին երրորդ պետության, տվյալ դեպքում Հայաստանի տարածքների հարցը լուծել առանց նրա մասնակցության:

Պ.-Դիվանագիտության մեջ հաստատված պրակտիկայի առումով, իհարկե, ճիշտ է այդպիսի մոտեցումը: Գոյություն ունի նաև այն տեսակետը, որ Մոսկվայի պայմանագիրը գնահատվում է որպես չարիքի փոքրագույնը:

Բայց մենք պարավոր ենք Մոսկվայի պայմանագիրը գնահատել, ելնելով իրական պայմաններից:

Առաջին. Պատերազմը Հայաստանի ու Թուրքիայի միջև ավարտված է համարվել: Որքան ճիշտ էր Ալեքսանդր Մյասնիկյանը, երբ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի կապակցությամբ ասել էր, որ հայ ժողովուրդը հոգնել էր սով ու ջարդ բերած պատերազմներից և նրան խաղաղություն էր հարկավոր:

Երկրորդ. Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով չեղյալ է համարվել 1920թ. դեկտեմբերի 2-ի հայ-թուրքական պայմանագիրը:

Երրորդ. Այդ պայմանագրերով, առանց որևէ կրակոցի ու զոհերի Մովետական Հայաստանի տարածքն ավելացել է 20 հազար քառ. կիլոմետրով և դարձել է մոտ 30 հազար քվմ:

Մի փաստ ևս: Մինչև Վրացյանի ղեկավարությամբ դաշնակցության ավանտյուրայի հաղթանակը, ինչպես արդեն նշեցի, թուրքական պատվիրակությունը վարում էր բանակցությունները ձգձգելու քաղաքականություն: Բայց հենց որ ստացվել է Հայաստանում սովետական իշխանության տապալման և նախկին իշխանության վերականգնման լուրը, թուրքական պատվիրակությունն այլևս դադարեցրել է բանակցությունների ձգձգումը:

Այս պարագայում, ինչպե՞ս չմտճես ավանտյուրան սկսած ուժերի և Թուրքիայի միջև եղած կապի մասին:

Հիմա, հաճախ հնչում է պահանջ Մոսկվայի և Կարսի պայմանագրերը չեղյալ համարելու մասին: Այս պահանջի հեղինակները մտածո են են դրա հետևանքների մասին:

Միանշանակ Թուրքիան կհամաձայնվի դրան միայն մի դեպքում. **Եթե հայ-թուրքական սահմանից հեռանան ռուսական զորքերը:**

Կամ, եթե Հայաստանի հանրապետությունը այդ պայմանագրերը չեղյալ համարի, ի նշ է, Թուրքիան այդ դեպքում նոր պայմանագիր կկնքի

ու գավթած հողերը եւ տ կվերադարձնի:

Այդ պահանջի հեղինակները՝ դաշնակցության գաղափարախոսները ն նրանց հետևորդները զբաղվում են միայն ու միայն պոպուլիզմով:

Նրանք սովետական իշխանության դեմ իրենց պայքարում Սովետական Միությանը մեղադրում էին այն բանի համար, որ Թուրքիայից չէր պահանջում վերադարձնել հայկական հողերը:

Հիմա դաշնակցությունը վերադարձել է Հայաստան, նորից տիրապետող է դարձել նրա գաղափարախոսությունը: Դաշնակցությունը մտել է կառավարության կազմի մեջ, Ազգային ժողովում ունի ազդեցիկ խմբակցություն:

Եվ նրանց ուզում են հիմա հրապարակավ հարցնել հետևյալի մասին: Հասել էք ձեր երազած Հայաստանի անկախությանը, ունեք ամեն ինչ դիրք, ազդեցություն, իշխանություն: Ձեզ ի նչն է խանգարում, որ լռում եք և այժմ Թուրքիայից չեք պահանջում ետ վերադարձնել հայկական հողերը:

Հ. - Ձեր գնահատականներն ու տեսակետները խորհելու տեղիք են տալիս: Բայց ուզում են հարցնել նաև 1937 թվականի ողբերգության բռնարարքների մասին:

Պ.- Դժվար է ձեր հարցին համառոտ պատասխանել, բայց կփորձեմ, որքան դա հնարավոր է :

Առաջին.

1930-

ականթվականներին կատարված ռեպրեսիաների քաճախբացատրվում են տարբեր կերպ: Շատ հեղինակներ դավերագրում են սովետական պետության նբնույթին, սոցիալիզմի երկրայանը, ինչպես նաև Ստալինի բնավորությանը, ընդգծելով նրա կասկածամտությունը, վախիտ արսափի իթնոլորտ ստեղծելուն, անձնական իշխանության ամրապնդմանը և այլն:

Իհարկե, այս հարցերի վերաբերյալ ունեմի մտայնե կտիվ դիտարկումները, որոնց հետևարող են նյա մաձայնվել:

Հանրահայտ է, որ Վ. Ի. Լենինը մշակել էր սոցիալիստական հեղափոխության տեսությունը, որը պարունակում էր միշտ արքի մանկանդրությունը: Այ դրոյթները ից մեկը վերաբերում էր առանձին վերցրած կապիտալիստական երկրում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հնարավորությանը:

Ժամանակին Մարքսն ու Էնգելսը գտնում էին, որ հեղափոխությունը ըչի կարող հաղթել մեկ առանձին վերցրած կապիտալիստական երկրում: Նրանք գտնում էին, որ պրոլետարիատը կարող է հաղթել, էթե դա միաժամանակ կսկսվի բոլոր կամ կապիտալիստական երկրներում մեծ մասում: Միայն այդ դեպքում պրոլետարիատը միասնական ջանքերով կկարողանա կոտորել իս մաշխարհային բուրժուազիայի դիմադրությունը:

Չարգացնելով մարքսիստական տեսությունը՝ Լենինը եկել է այն եզրակացության, որ իմպերիալիզմի շրջանում սոցիալիստական հեղափոխությունը չի կարող միաժամանակ հաղթել բոլոր երկրներում, որնրահաղթանակը հնարավոր է սկզբում մի քանի կամ մեկ առանձին վերցրած կապիտալիստական երկրում:

Պատմականորեն ձևավորվել էր այնպես, որ Ռուսաստանը համաշխարհային իմպերիալիստական շրթայի թույլ տակ ներդարձել:

Ինչու է: Որովհետև, ռուսական իմպերիալիզմը ինձնձնվել էր ճորտատիրոջ յանմանացորդներով մեջ: Նա սոցիալական նուազգային ձնձնում ներկայանացնում էր կոպիտ, միահեծան, ռազմաֆեոդալական մեթոդներով:

Այդպատճառով էՌուսաստանում դասակարգային և կատարությունները, հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, ընդունել են ճայրահեղ սրված քննույթ:

Յարական է Ռուսաստանի շահագործող դասակարգերն իրենց ուժերը ուժեղեցնել և փոխադարձ թշնամանքով և ընդունակ է ինկասպեցնել աճող հեղափոխական ճգնաժամը:

Միևնույն ժամանակ Ռուսական պրոլետարիատում նաև լուրի նրանակալությունը բուրժուական գիտելիքի մեղաքարի մարտական ավանդույթներ, դեկավարվելով մարքսիստական կուսակցության կողմից, բավականաչափ համախմբված ու կազմակերպված էր, որպես գիլական ճգնաժամի սահմանափակ իրականացնելիս պետրոժուա-դեմոկրատական, այնպես էլ լսոցիալիստական հեղափոխություն:

Այսամենքի սացրել էր նրան, որ հենց Ռուսաստանում մի մյուս իրադրություն կան շղթայի ռոպակը դարձել էր ամենաթույլը և նրանում ավելի շատ, քան մյուս երկրներում, օբյեկտիվ պայմաններին կողքին ձևավորվել էին սուբյեկտիվ պայմաններ, որոնք պահովել են այդ շղթայի համեմատաբար թեթև ճեղքումը, որը և տեղի է ունեցել 1917 թ.:

Արդեն 1918 թ. գարնանը, Բրեստի հաշտությունից հետո, Լենինը համաշխարհային հեղափոխության մասին տեսությունը համարել է գեղեցիկ հեքիաթ, որին կարող են հավատալ միայն երեխաները:

Լենինի մահից հետո ՀամԿ(բ) Կենտրոնի հանդես են եկել լայնուժեքը, որոնք դեմ էին կանգնում երկրորդ շրջանի կոմունիստական կուսակցության մտցիալ իրադրության և կիսանհարիստությունն առանց համաշխարհային հեղափոխության:

Այդուժեքը հանդես էին գալիս (արդեն բացահայտելով) կապիտալիստական շրջապատման պայմաններում մեկ, առանձին վերցրած երկրում սոցիալիզմի հաղթանակի անհարիստության օգտին:

Մինչև 1933 թ. այս բանավեճն ավելի շատ տեսական նրբություններում: Սա կայն, ամենիսպիտակվել է, երբ 1933 թ. ընտրությունների արդյունքով Գերմանիայում մի շահությունն անցել է չիտլերի գլխավորած նացիոնալ-սոցիալիստական կուսակցության ձեռքը:

Այս փաստը դարձել է լուրջ կոմունիստական համար, ովքեր վիճարկում էին կապիտալիզմի շրջապատման պայմաններում, մեկ, առանձին վերցրած երկրում, տվյալ դեպքում ՄՍՄՄ-ում սոցիալիզմի կառուցման հնարավորությունը:

Հանրապետականների պարտությունն Բուսպանիայում, և այն տեղափոխության և ստական շրջապատման փաստն ավելի էր երկրում ՄՍՄՄ-ում սոցիալիզմի շրջապատման ավանդակաձև պայքարը:

Այդպայքարում երկրի փաստացի ղեկավարությունն իր ձեռքում պահող Ստալինը համախոհներին հետախոսի հանդես էր գալիս և Լենինի դրությամբ պայմանադրությունից երբեք:

Երկու թևերի միջև կալվել է անհաշտ պայքար: Այդպայքարի սկզբում Ստալինը վարում էր համոզելու քաղաքականություն: Սակայն, հատկապես 1934 թ. դեկտեմբերի 1-

ին Կիրովի սպանությունից հետո, Ստալինը փոխել է իր քաղաքականությունը: Համոզելու մեթոդից անցնել է բռնությունների արտոն մեթոդին:

Նենցայս հարցում Ստալինը թողել է տվել կոպիտ սխալներ, որոնք և դարձել են նրա աղբյուրները: Այդ սխալների արդյունքով Ստալինը սկսել է ֆիզիկական հաշվեհարդար տեսնել նրանց հետ, ովքեր նրան հակառակ կողմ էին գաղափարախոսության ասպարեզում:

Ահա, իմ համոզմամբ, 1937 թ. ողբերգությունը սկսվել է նրանից, որ առանձին գործիչներ երկրի հետագա գոյության մասին ունենին այլատերացում տեսակետ, որոնք համ

անհունչ էին Ստալինի ու Խրուշչևի համախոհները, որ հետևեցին:

Եվ ուսման համար էլ արդարացնել նրանց նկատմամբ գործադրված բռնությունները: Առավել ևս, որ այդ բռնությունները հաճախ հիմնավորված չլինելով, ընդունել են լայնամասշտաբ ծավալ:

Քաղաքականության վարչությունները էլ ենթադրաբար տուժել են բնական ստույգ և անկողմնակա քննարկումներով:

Դրանք տեղի են ունեցել անկախորեն երկրի քաղաքականության կարգից, քաղաքականության արևելյան կողմից: Քաղաքականության վարչությունները ենթադրաբար ևս Ռուսաստանում՝ հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսում մահայտնի են նշանակված երկրի անկողմնակա:

2.- Հետագայում, Ստալինի մահից հետո, հատկապես կուսակցության 20-րդ համագումարում ընդունված որոշումների հիման վրա 1930-ական թվականներին դատապարտված գործիչներն արդարացի էլ են: Այսօրվա ընթացիկներից շատերն այդ մասին տեղեկություն չունեն:

Խնդրում եմ այդ դատավարություններից առավել կարևորներին մասին հիշեցնեք:

Պ.-

Առաջին քաղաքական դատավարությունը կոմկուսի և սովետական կառավարության խոշոր գործիչներին նկատմամբ տեղի է ունեցել 1936 թ. օգոստոսի 19-24-

ին Միությունների տանդեմի ձևում: Այդ դատավարությունը հայտնի է որպես սիսկոսովետական միացյալ տրոցկիստական-զինովևական կենտրոնի գործ:

Զինովև, Կամենևև, մյունսերը, այդ թվում մասնաճյուղի հայրենակից Վադարշակ Տեր-Վահանյանը մեղադրվում էին Կիրովի սպանության, Ստալինի կյանքի դեմ ահափորձ կատարելու, սովետական պետության դեմ հանցավոր գործողությունների մեջ:

Բոլոր մեղադրյալները՝ բացի Սմիրնովից, ընդունել են իրենց մեղավորությունը: Մեղադրական եզրակացությունը հրապարակելու հետևանքում մտնում էին 20-րդ դարի ստալինյան դատավարության մահապատժի ենթարկելու մասին: 1936 թ. օգոստոսի 21-

ին <<Սրաբա>> թերթը տպագրել է Ռիկովի, Ռակովսկու և Պյատակովի հայտարարությունները մահապատժի պահանջելու մասին:

Ահա, սիսկոսովետական պետության հայտարարությունից. <<Նոսքերը չեն վարարում, որպեսզի մեղադրվին արտահայտեմք միմյուրյան մասին և անքննադատվեն: Դրանք արդևային կերպարանքը կորցրած անձինք են: Նրանց հարկավոր է չնչնցնել, որոնք վարակում են սովետական երկրի առողջ թաղերը, որոնք կարող են մեր առաջնորդներին մահապատժի և արդեն պատճառել լենինների իրավագույն արդևանցից մեկին՝ Կիրովին: Փառքու պատիվ՝ Ն.Գ. Ժկունիսարիատին, որ մեղավոր էլ է այդ բանդային >>:

Բոլոր մեղադրյալներն ենթարկվել են մահապատժի:

1937 թ. հունվարի 23-30-

ին տեղի է ունեցել Պյատակովի, Սերբերյակովի, Ռադեկինի մյունսերի դատավարությունը: Բացի Պյատակովից, մյունսերը կենտրոնի քաղաքականության մասին թեկնածու էին: Նրանք ընդունել են իրենց վերագրվող մեղադրանքները և ենթարկվել են մահապատժի:

1937 թ. հունիսին մահվան դատապարտվեցին Կարմիր բանակի բարձր հրակազմի խնամքի տակ պահվող Վառլամ Գրիգորյանը, Մուխոմեևը, Մուխոմեևի զինակիցները, Գամառնի կրկուրի շեքեր, որոնք մեղադրվել են զինվորական երդումը խտրելու, հայրենիքի դավաճանելու, ՍՍՀՄ ժողովուրդների նկատմամբ դավաճանելու

Լ. քանվորա-գյուղացիական Կարմիրբանակի նդավաճանելում եջ:

Ամենախոշոր քաղաքական դատավարությունը հակասովետականն աշտրոցկիստական բրյկի գործներ, որը բացվել է 1937 թ. մարտի 2-ին Միությունների տանդալի ճում: Մեղադրվում էին դեռևս Լենինի ժամանակ բաղադրության դաժան երբն տրված Բուխարինը, Ռիկովը, և Կրեստինսկին: Դատվում էին նաև միջարք ժողովուներ: Բոլորն էլ ընդունել են իրենց վերադրվող մեղադրանքները:

Այս դատավարությունից հետո ՆԳԺԿ-

ի պատասխանատու աշխատակիցներ հուղեկցության բնանրապետություն ններևմարզեր, այդ թվում նաև Հայաստան են մեկնել հատուկ կիսագորներ տեղ երում գտում կատարելու համար:

Չեմսխավի, եթե սեմ, որ 1930-

ականթվական էրին տեղի իունեցած սովետական մոդեռնացման ընթացքում բոլոր գոհերը միայն ինչ-որ առանձին մարդու խելացն որության արդյունք են:

Իմ համոզմամբ այդպիսի մոտեցումը նշանակում է նաև հարգալից վերաբերումը նախորդների նկատմամբ, նշանակում է նրանց կյանքի մասստագրկում:

Ստալինի նդիվային բնությունը այլու խարեն, իմ համոզմամբ, հարկավոր է գտնել այն պատմական տրամաբանությունը, որը նրանք երել էլ այդպիսի նույն թե այլորջման:

Ավելացնեմ, որ բոլոր նրանց, այդ թվում նաև տողերի սեղինակին, որոնք չեն ընդունում պատմության սովեթիցիայանույակով կյանտաբերակը, ստալինիստ չեն: Այո, Սովեթիցիան ընթացում է նրանց հետևողական երբ հակաստալինիստ են: Բայց ամենից սեծի կաստալինիստ եղել է չիտլերը: Պարզապես սեմ իմ նամանմտածողները չեն քուզում կանգնել չիտլերի նրահետևողների կողքին:

Հ.-1937թ. Հայաստանում տեղի ունեցած ռեպրեսիաների մասին ինդրում են, եթե կարելի է, ավելի մանրամասն ներկայացնել:

Պ.-Այդ հարցին հարկավոր է առանձին անդրադառնալ, քանի որ շատ ժամանակ կպահանջվի: Ուստի, եկեք դա թողնեք հաջորդ գրույցի ժամանակ: Առայժմ կամենում եմ միայն սասել, որ միության կանմաս շտաբով կաված գտումը, հակահեղափոխական կենտրոնների բացահայտման մեթոդայորցեսնիրայլանդակ կիրառումը գտել են նաև Հայաստանում...

Հ.-Լավ, համաձայն են: Եկեք խոսենք այն մասին, թե ինչու է մեր ժվում կամ ժխտվում սովետական տարիների ձեռք բերված նվաճումները:

Պ.-

Սովետական Միության վերացումից հետո նրատարածքում հաստատված իշխանությունը մեր ժում մե սովետական քաղաքակրթությունը, Սովետական Միության ունեցած դերն ու նշանակությունը նայող իրքերից էլ մոտենում են Սովետական Միության պատմական անցյալին:

Այդպիսի մոտեցման արդյունքով սովետական իշխանության գործողություններն իրող իրքերն արապաղելու, ներքին և արտաքին անվտանգության նդեմ կատարված տնձգությունները կանխելու միջոցառումները համարվում են ոչ միայն սխալ, այլ և ենթարկվում խիստ դատապարտման:

Պատմության մեջ այսպիսի փաստերը շատ կան ՍՍՀՄ-ի ստեղծած քաղաքակրթությունը ժխտելու, վարկաբեկելու գաղափարախոսությունն տրադաքականությունը զակի երևույթ են:

Դա այդպես էլ պետք է լիներ, որովհետև սովետական քաղաքական համակարգին, սովետական քաղաքակրթությանը փոխարինել են միանգ

ամայնհակառակգաղափարախոսություն, բոլորովինտարբերպետական համակարգըդեռնսիրելությունըչիմաստավորածքաղաքակրթություն:

Բայցևսնդիքնայստեղայնե, որօրյեկտիվպատմականությանսկզբունքըպահանջումէայլևսգոյությունչունեցողպետությանքաղաքականությունը, նրաստեղծածքաղաքակրթությունըչդիտելատելություն, թշնամանքի, արհամարանքի, ժխտմանպրիզմայով:

Այլպպեսառաջանումէխզումանցյալիուներկայիմիջև, հնիունորիմիջև: Եվթեներոնուգումէ, որհիննիրաջևխոնարհվի,ընդունինրազայնստնուառավելությունը, ապանորըպետքէավելիլավուավելիբարձրարժեքներստեղծինհաստատիարդարություն, առանցորիանկախության, ազատությանմասինխոսակցություններըկմնանորպետդատարկ, ոչինչչասողհնչյուն:

Երկրորդ. Հատկապես 19-

րդդարիվերջերիցտարբերերկրներիառաջադեմտածողներիցշատերըսկսելէն

Միջնադարիցխոսափելիևկվիզիցիայիսանձարձակություններիպատճառով, թեևբոլորկողմերովայդեհետաքրքիրկազմակերպությանաստեղայինծավրեղէլէմարդասերՎերածնունդընուչթեխավարմիջինդարերը:

Բավականեմիայնասել, թեՎերածնունդնինչտեղէլմարդկությանը: Վերածննդիժամանակաշրջանըմարդկությաննապահովէլինտելեկտուալ ուզեղարվեստիծաղկում, որըտվելէհսկայականիմպուլսքաղաքակրթությանհետագազարգացմանհամար

Այնպեսոր, չիկարելիքրիստոնեությանմասինկարծիքկազմելկամդատողություններասել, նկատիունենալովմիայնինկվիզացիան:

Երրորդ.

1917թ. Հոկտեմբերյանհեղափոխությանհաղթանակիցհետհաստատավածսովետականիշխանությունը ՍովետականՌուսաստանը, ապաՍովետականՄիությունըհայտնվեցինիրենցարտաքինուներքինքաղաքականությունըչընդունողմիջազգայինուժերիկենտրոնացվածհարվածներիտակ:

ԱյժմՍովետականՄիությանվերացումիցհետոէլ, ոմանք, այսպեսկոչվածլիբերալ <<դեմոկրատները>>,շարունակումենՍովետականՄիությունըներկայացնելորպեսժողովուրդներիրբանտ, առաջինպլանմղելով 1930-1940-ականթվականներինտեղիունեցածռեպրեսիաներիփաստը:

Այսպիսիմտեցմանամենամեծվտանգրկայանումէնրանում, որմոռացությանեմատնվում, օրինակ, ՍովետականՀայաստանիհաջողություններիպատմությունը:

ՄոդաէդարձելՍովետականՀայաստանիհաջողություններիմասինևվազույնդեպքումհիշելը, վատագույնդեպքում դրանցժխտելնուծարելը:

Այսպեսենվարվումզանգվածայինլրատվությանմիջոցներիզերակշիռմասը, պետականպաշտոնյանները, մտավորականությանշատներկայացուցիչներ գրողներ, ռեժիսորներ, ուսուցիչներ, դասախոսներևայլևայլև:

Նրանք, բոլորըմոռացությանենմատնում, որ 1920թ.

700 հազարբնակչությունունեցողՀայաստանըսովետականիշխանությանմայրամուտին,

1990թ. արդենուներմոտ 4 միլիոնբնակիչ, որՍովետականՀայաստանըարձելէրիայժողովրդիկազգայինհամախմբմանկենտրոն:

Նրանքմոռանումեն, որհամատարածանգրագիտությաներկիրՀայաստանը սովետականտարիներինդարձելէհամատարածգրագիտությաներկիր:

Նրանք մոռանում են, որ սովետական սարիներին Հայաստանը դարձել էր բարձր զարգացած ու մեծ համբավի հասած գիտության, գրականության, մշակույթի, ժողովրդական կրթության երկիր:

ՍովետականՀայաստանիհաջողություններիպատմությանմեջ

իրենցիաստատունտեղնենգբաղեցնում Ալեքսանդր Մյասնիկյանը, Սարգիս Լուկաշինը, Սահակ Տեր-Գաբրիելյանը, Ադամի Բասնջյանը, Գրիգոր Հարությունյանը, Սուրեն Թովմասյանը, Յակով Չարոբյանը, Անտոն Քոչինյանը, Կարեն Դեմիրճյանը, Բաղայ Մուրադյանը, Լյուդվիգ Դարիբջանյանը, Ալեքսան Կիրակոսյանը, Վլադիմիր Մովսիսյանը, Գրիգոր Հասրաթյանը, Մուրադ Մուրադյանը և ընդհանուրի շնորհիվ, որոնք պարբերաբար ձեռնարկեցին նույն ժամանակահատվածում հաստատված հարցերի և պատասխանների հարցազրույցները, որոնք օգտագործվեցին Հայաստանի գրագետ մտառարարների թանգրանտի և համալսարանի կողմից:

Սովետական Հայաստանի հաջողություններն արտադրության գործունեության մասին հարցազրույցները հակադրվում են հարցազրույցներին, որոնք հարցազրույցներում հարցադրվում են հարցադրողի կողմից, Արվա-Սևան ժայռակոփ ջրանցքը, Սևան-Չանգու հիդրոէլեկտրակայանը, Հայկական տոմսային ընկերությունը, Յուրախանի վերածնունդը, Հաղթանակի մոնումենտը, Երևանի մետրոպոլիտենը, Հրազդանի մարզահամալիրը, Օպերային թատրոնը, Հայֆիլմ կինոստուդիան, Թաթուլ Ալթունյանի անվան երգիչու պարիպետական անսամբլը, Հայաստանի պարիպետական անսամբլը, Հայաստանի պետական թզյախումբը, Կոմիտասի անվան քառյակը, Մայաթ-Նովայի անվան գուսանական անսամբլը, Երաժշտական ուսումնարանները, գիտահետազոտական կենտրոնները, հաստատությունները, արդյունաբերական ձեռնարկությունները, զարգացած գյուղատնտեսությունը:

Սովետական Հայաստանի հաջողություններն արտադրության թանգրանտի կողմից հարցազրույցներում հարցադրվում են հարցադրողի կողմից, որոնք օգտագործվեցին նույն ժամանակահատվածում հարցազրույցների հարցադրողի կողմից:

Սովետական Հայաստանի հաջողություններն արտադրության և ներքին շուկայի մասին հարցազրույցներում հարցադրվում են հարցադրողի կողմից, որոնք օգտագործվեցին նույն ժամանակահատվածում հարցազրույցների հարցադրողի կողմից:

Սովետական Հայաստանի հաջողություններն արտադրության և ներքին շուկայի մասին հարցազրույցներում հարցադրվում են հարցադրողի կողմից, որոնք օգտագործվեցին նույն ժամանակահատվածում հարցազրույցների հարցադրողի կողմից:

Սյապետ շարունակելի կարելի է Նորսերնդի նշանակալից արտադրությունը, որն արտադրվում է Սովետական Հայաստանի հաջողություններն արտադրության և ներքին շուկայի մասին հարցազրույցների հարցադրողի կողմից:

Իմ համոզմամբ, նրանք, ովքեր ժխտում են այն ամենը, ինչով Սովետական Միությունը հարստացրել է մարդկային քաղաքակրթությունը, նպաստել են արագ զարգացմանը (օրինակ՝ Սովետական Հայաստանի մեծագույն առաջընթացը), իրենց հիստորիկ կադուկով շարունակում են չընդունել Սովետական Միությունը, մարտնչում են Սովետական Միության մասին պատմական հիշողության նկատմամբ, դեռ շարունակում են պարծենալ, ասելով <<ատում են կոմունիզմը, ատում են Սովետական Միությունը>>, դատարդ են հատուկ տեսակետներ, այլախտորոշումներ:

Այնպես, որ չհկարելի կունսի զմի, սովետական ժամանակաշրջանի մասին հատուկություններն են կամ կարծիք կազմել միայն կատիուն են ալով 1930-1940-ական թվականներին տեղի ունեցած ճեղքում սխալների փաստով:

Հ. Քանի որ դուք խոսեցիք Սովետական Հայաստանի ձեռք բերած հաջողությունների մասին, ուզում եմ ձեզ հարցնել, որքանով է պատմականորեն ճիշտ, երբ 1990թ. ի վեր, յուրաքանչյուր տարի շուքով

նշվում է առաջին հանրապետության հաստատման տարեդարձը, իսկ Սովետական Հայաստանի հաստատման օրը չի նշվում կամ եթե նշվում է, ապա միայն բացասական որակումներով, երբեմն էլ ծաղրանքով:

Պ.-Իմ աշխատություններից մեկում բերվել է 1926թ. <<Դրոշակ>>-ից հետևյալ հատվածը, որն ուզում եմ հիմա կրկնել. <<Բայց ես այնպես ապագայ հայ պատմագիրը հիացած է մնալու դաշնակցության անձնուիրության, վառ հայրենասիրության, հայ ժողովրդի իտեալը մարմնացնող այն դիցազներու վրայ, որոնք կամք են ունեցել հայության գոհասեղանին դնելու իրենց ողջ կեանքը, եւ որոնք պարզելով <<>մահ կամ ազատություն>> հարիւր հազարաւոր զոհերու արեան գնով 1918թ. Մայիսի 28-ին իրականացրին մասամբ հայ աշխատաւոր ժողովուրդի փայփայած գաղափարները, Հայաստանի անկախութիւնը:

Հայ ժողովրդի դարաւոր ստրկութեան մեջ կազմուած նկարագիրն ազնուացնող դաշնակցութիւնը 1918 թուի ակտով եկաւ ցուցադրելու հայ կեանքի մեջ գերմարդկային ըմբոստացումներու եւ գիտակցութեան յաղթանակը>> :

Այս գեղեցիկ հեքիաթը հնարվել է միայն գործից ու իրական պատմությունից անտեղյակ մարդկանց համար և, ահա, քանի տասնամյակ է, համառորեն արմատավորվում է հասարակական գիտակցության մեջ :

Եվ այդ տեսակետը Հայաստանի երրորդ հանրապետության օրով բարձրացվել է պետական մակարդակի վրա:

Մայիսի 28-ը մեծ շուքով նշվում է որպես Հայաստանի անկախության օր և փառարանվում է այդ անկախությունը <<կերտող>> դաշնակցությունը:

Մինչդեռ դառն իրողությունն այն է, որ այդ անկախությունը ձեռք է բերվել ոչ թե <<դաշնակցութեան հարիւր հազարաւոր զոհերի գնով>>, այլ միայն ու միայն երիտթուրքերի դեկավարած թուրքական ցեղասպան պետության թելադրանքով: Այսինքն արտաքին ուժի թելադրանքով:

Այդ ցեղասպան պետության թելադրանքով էլ 1918թ. հունիսի 4-ին կնքված Բաթումի պայմանագրով ստեղծվել է <<անկախ>> Հայաստանը մոտ 9 հազար քառ. կիլոմետր տարածքով:

Այսպիսով, Հայաստանի <<անկախությունը>> հռչակվել է արտաքին ուժի թելադրանքով, սովալ դեպքում հայ ժողովրդի ցեղասպանությունը կազմակերպած երիտթուրքական իշխանության թելադրանքով:

Թրքասիրության թակարդի մեջ խճճված դաշնակցական գործիչները կուրացել էին անկախության մասին շաղակրատող թուրքերի շողմ խոսքերից, չհասկացան, որ Բաթումի պայմանագրով օգնեցին թուրքերին զավթելու Արևմտյան Հայաստանը և թաղելու Հայկական հարցը:

Հ. - Խի ստ չէ ձեր հարցադրումը:

Պ.- Պատասխանեմ կարճ: Հետագայում, րնդիույ մինչև Լոզանի կոնֆերանսը, որտեղ էլ որ քննարկվում էր Արևմտյան Հայաստանի հարցը, որքան էլ, որ Պողոս Նուպարը ջանքեր էր գործադրում միջազգային կոնֆերանսներին մասնակցող եվրոպական խոշոր տերությունների դեկավարների առջև դնել Հայկական հարցը, Թուրքիան մատնացույց էր անում Բաթումի պայմանագիրը, պնդելով, որ ստեղծվել է <<անկախ Հայաստան>>, որ հայերն ունեն իրենց պետությունը և այլն :

Սակայն, շարունակեմ միտքս:

1918թ. Հայաստանի անկախությունը հռչակվել է արտաքին ուժի՝ երիտթուրքական իշխանության թելադրանքով: Բայց դա չի խանգարում, որպեսզի համազգային մասշտաբով մայիսի 28-ը նշվի որպես առաջին հանրապետության անկախության հռչակման օր, իսկ դաշնակցության

գործիչներին ներկայանալ որպես Հայաստանի անկախության հեղինակներ:

Այժմ կամենում եմ ձեր ուշադրությանը ներկայացնել ևս մեկ հարցի վրա:

1920թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում տեղի է ունեցել իշխանավորություն: Հայ բոլշևիկները ստանալով Սովետական Ռուսաստանի բազմակողմանի աջակցությունը, երկրում հռչակեցին սովետական իշխանություն:

Այսինքն այս անգամ էլ Հայաստանում առկա էր մեկ այլ արտաքին ուժի Սովետական Ռուսաստանի միջամտությունը:

